


2017 ԹՎԱԿԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՏՈՒԲԵՐԿՈՒԼՈՋԻ ՀԱՄԱՃԱՐԱԿԱԲԱՆԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ


Տուբերկուլոզի կառավարման 2016-2020 թվականների ազգային ծրագրի շրջանակներում իրականացված միջոցառումների արդյունքում 2017 թվականին գրանցվել է տուբերկուլոզի հիվանդացության և մահացության նվազում: Արձանագրվել է նաև տուբերկուլոզի առաջնակի դեպքերի թվի նվազում, ըստ որի 2017 թվականին հիվանդացության ցուցանիշը (100 հազ. բնակչի հաշվով) կազմել է 23.1 (2007 թվականին արձանագրված ցուցանիշը նվազել է մոտ 2 անգամ) և կրկնավարակվածների դեպքերի հետ միասին հիվանդացության ցուցանիշը կազմել է 28.9: 2017 թվականին մահացության ցուցանիշը կազմել է 1.8 (2007 թվականի ցուցանիշը նվազել է 3 անգամ) /Նկար 1/:



Նկար.1. ՏԲ Հիվանդացությունը և մահացությունը /2007-2017 թթ./

2017 թվականին Հայաստանի Հանրապետությունում հաշվառման մեջ է գտնվել 926 ակտիվ տուբերկուլոզի դեպք (նախորդ տարվա համեմատ նվազել է 14%-ով) ընդ որում առաջնակի դեպքերի թիվը կազմել է 691, որը 2016 թվականի համեմատ նվազել է 16%-ով (նկար 2), իսկ կրկնակի բուժում ստացած դեպքերը՝ 235 է, որից 28-ը չեն ունեցել նախկինում բուժման բարեհաջող ելք: 2017 թվականին արձանագրված դեպքերի 74.6%-ը

եղել են առաջնակի (2016 թվականին այն կազմել է ընդհանուր դեպքերի 75.8%-ը), 25.4%-ը՝ կրկնակի բուժում ստացած (2016 թվականին եղել է 24.2%):




Նկար 2. Նոր ՏԲ դեպքերը /2007-2017թթ./

Հանրապետությունում արձանագրված տուբերկուլոզի նոր դեպքերի 78.1%-ը կազմում են թոքային դեպքերը (2016 թվականին այն եղել է 78.5%), իսկ 21.9%-ը՝ արտաթոքային:

Առաջնակի հիվանդներից 50-ը 0-17 տարեկան երեխաներ են (2016 թվականին՝ 46), որը կազմում է առաջնակի դեպքերի 7.2%-ը: 0-17 տարեկան տուբերկուլոզով հիվանդ երեխաների 53%-ի մոտ թոքային տուբերկուլոզ է, իսկ 47%-ի մոտ՝ արտաթոքային (2016 թվականին այն եղել է համապատասխանաբար 45.6% և 54.5%): 0-17 տարեկանների խմբում 2017 թվականին արձանագրվել է 3 դեղակայուն ՏԲ-ի դեպք, որից 1-ը՝ գերդեղակայուն ՏԲ:

2017 թվականին արձանագրված 524 թոքային առաջնակի դեպքերից 187-ը, իսկ 153 թոքային ռեցիդիվ դեպքերից 43-ը՝ քսուք դրական դեպքերն են: 0-17 տարեկան թոքային առաջնակի տուբերկուլոզով երեխաներից 4-ը եղել են քսուք դրական: Նոր դեպքերի

մանրէագատման ցուցանիշը 100 հազ. ազգաբնակչության հաշվարկով կազմում է 6.3 նախորդ տարվա 7.6-ի փոխարեն: Քսուք դրական դեպքերը կազմում են արձանագրված դեղազգայն ՏԲ թոքային դեպքերի 36%-ը /2016 թվականի 34%-ի փոխարեն/: Նոր դեպքերում քսուք դրական դեպքերը կազմում են 27.1% /2016 թվականի 27.9%-ի փոխարեն/ /Նկար 3/:



Նկար 3. Նոր քսուք դրական դեպքերի բաժինը նոր դեպքերում

Կյանքում առաջին անգամ հաստատված ակտիվ տուբերկուլոզի ախտորոշումով բոլոր հիվանդների թվաքանակից 67.7%-ը կազմում է քաղաքային ազգաբնակչությունը, 32.3%-ը՝ գյուղական ազգաբնակչությունը: Ընդ որում քաղաքային ազգաբնակչության հիվանդացությունը 2017 թվականին կազմել է 25՝ 2016 թվականի 29-ի փոխարեն և գյուղական ազգաբնակչության հիվանդացությունը՝ 21, 2016 թվականի 24.5-ի փոխարեն: Տղամարդկանց շրջանում հիվանդացության ցուցանիշը մոտ 3.6 անգամ բարձր է, քան կանաց շրջանում և կազմում է 37.4 (2016 թվականին՝ 42.6), իսկ կանանց շրջանում՝ 10.3 (2015 թվականին՝ 13.7): 2017 թվականին առաջնակի դեպքերից մոտ 21.1%-ը հիվանդացել են արտերկրում՝ 2016 թվականի 18,8%-ի փոխարեն:

Կյանքում առաջին անգամ ախտորոշվածներից 2.9%-ը կազմում են 0-14 տարեկան երեխաները, 17.6%-ը՝ 15-24 տարեկանները, 20.2%-ը՝ 25-34 տարեկանները, 15.9%-ը՝ 35-44

«ՏՈՒԲԵՐԿՈՒԼՈՋԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈՍԿ

տարեկանները, 17%-ը՝ 45-54 տարեկանները, 15.7%-ը՝ 55-64 տարեկանները, 10.7%-ը՝ 65-ից բարձր տարիք ունեցողները: Ընդ որում աշխատունակ 15-54 տարիքային խմբերին բաժին է ընկնում դեպքերի 70.7%-ը:

Մահացության ցուցանիշը 2017 թվականին կազմել է 1.8: 2017 թվականին տուբերկուլոզի հետևանքով մահացել է 55 մարդ, ընդ որում 47-ի մոտ տուբերկուլոզն ախտորոշվել է կյանքում առաջին անգամ, որը կազմում է մահերի մոտ 85.4%-ը: Տուբերկուլոզից մահացած ընդհանուր թվաքանակից ստացիոնարում մահացել է 41-ը: Արձանագրված տուբերկուլոզի հետևանքով ընդհանուր մահերից 22%-ը հանրապետությունից դուրս հիվանդացածներն, իսկ 40%-ը կազմել են ՏԲ/ՄԻԱՎ համավարակով հիվանդները:

Հիվանդացության հանրապետական միջին ցուցանիշից բարձր ցուցանիշներ ունեն Շիրակի (30.5), Լոռու (27.1) և Արարատի (25.5) մարզերը:

Ամենացածր հիվանդացությունն արձանագրվել է Արագածոտնի մարզում՝ 18.6 և Վայոց Ձորում՝ 17.9:

Մահացության միջին հանրապետական ցուցանիշից բարձր ցուցանիշներ արձանագրվել են Արմավիրի մարզում (3.4) և Երևանում (2.7):

Միջին հանրապետական մահացության ցուցանիշից ցածր ցուցանիշներ են գրանցվել Արարատի (1.9), Գեղարքունիքի (1.7) և Սյունիքի (0.7) մարզերում: Վայոց Ձորի մարզում 2017 թվականին մահվան դեպք չի արձանագրվել:

«ՏՈՒԲԵՐԿՈՒԼՈՋԻ ԴԵՍ ՊԱՅՔԱՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ

Հայաստանի Հանրապետությունում 2014-2016 թվականների ընթացքում
տուբերկուլոզի հիվանդացության և մահացության ցուցանիշները

Տարեթիվ/ Մարզ	Հիվանդացության ցուցանիշ			Մահացության ցուցանիշ		
	2015թ.	2016թ.	2017թ.	2015թ.	2016թ.	2017թ.
Ք. Երևան	26.5	27.4	21.8	1.8	1.7	2.7
Արագածոտն	20.8	16.9	18.6	0.8	0.8	2.3
Արարատ	25.1	29.7	25.5	1.9	0.4	1.9
Արմավիր	34.5	28.1	20.7	1.9	2.3	3.4
Գեղարքունիք	28	30.6	19.9	1.3	2.2	1.7
Լոռի	29.3	29	27.1	1.8	1.8	2.3
Կոտայք	28.8	25.6	23.7	2.4	1.6	2.4
Վայոց Ձոր	17.7	17.7	17.9	0	2	0
Սյունիք	23	34.4	18.7	2.9	2.2	0.7
Տավուշ	28.7	22.3	23.3	0.8	1.6	2.4
Շիրակ	35	26.7	30.5	1.6	1.2	2.1
ՀՀ	28	27.4	23.1	1.6	1.6	1.8

Ազատագրված վայրերում 2017 թվականի ընթացքում արձանագրվել է 14 տուբերկուլոզի դեպք, որից 6-ը առաջնակի թոքային դեպք է, որից 3 դեպք (21,4%-ը)՝ մանրէազատող:

Հիմք ընդունելով ուղղակիորեն հսկմամբ բուժման ռազմավարությունը /ԴՈՏՍ/, որով նախատեսված է բուժման ելքերն ամփոփել բուժումը սկսելուց 12-15 ամիս անց և, քանի որ տուբերկուլոզի համաճարակի առումով առավել վտանգ են ներկայացնում քսուք դրական դեպքերը, Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից մշակված ցուցանիշների մեջ կարևոր տեղ է զբաղեցնում առաջնակի քսուք դրական դեպքերի և՛ հայտնաբերումը, և՛ բուժման արդյունավետությունը. ստորև ներկայացվում է 2015

«ՏՈՒԲԵՐԿՈՒԼՈՋԻ ԴԵՍ ՊԱՅՔԱՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ

թվականի, ինչպես նաև համեմատության համար, նախորդ թվականների նոր քսուք դրական տուբերկուլոզով հիվանդների բուժման ելքերը /Աղյուսակ 1/:

Տարեթիվ/Ելք	2014	2015	2016
Բարեհաջող ելք	79.0% 139/176	82.3% 116/141	80% 148/186
Ռեժիմի խախտում	12.5%/ 22/176	7.0% 10/141	8.6% 16/186
Անբարեհաջող ելք	4.0% 7/176	5.0% 7/141	4.8% 9/186
Մահ	4.5% 8/176	5.7% 8/141	6.6% 13/186

Աղյուսակ 1. Նոր քսուք դրական տուբերկուլոզով հիվանդների բուժման ելքերը /2014-2016թթ./

2016 թվականին բուժման մեջ ընդգրկված դեղազգայուն նոր քսուք դրական ՏԲ դեպքերի բուժման ելքերում նպատակային 85%-ից բարձր բուժման արդյունավետություն արձանագրվել է քրեակատարողական համակարգում (100%) եղել է 1 նոր քսուք դրական հիվանդ և ունեցել է բուժման բարեհաջող ելք (բուժված): Նոր քսուք դրական դեպքերի բուժման ելքերում հանրապետական բարեհաջող ելքից բարձր ցուցանիշ արձանագրվել է Տավուշի մարզում (100%), Արարատի՝ (95%) և Արմավիրի (87%) մարզերում:

Ամենացածր բուժման արդյունավետություն արձանագրվել է Արագածոտնու՝ (50%), Լոռու (73%) մարզերում և Երևանում՝ (71%):

2016 թվականի բուժման մեջ ընդգրկված դեղազգայուն ՏԲ ընդհանուր դեպքերի բուժման ելքերում բարեհաջող բուժման բաժինը կազմում է 81% (2015 թվականին այն եղել է 79,3%), բուժման ընդհատումները՝ 11.8% (2015 թվականին կազմել է 14,5%), անբարեհաջող ելքը 2.1%, մահերը 5,4%:

2017 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ 2-րդ շարքի դեղերով բուժման մեջ ընդգրկվել է 173 ՏԲ դեպք, որից 104-ը՝ բազմադեղակայուն հիվանդ:

«ՏՈՒՔԵՐԿՈՒԼՈՋԻ ԴԵՍ ՊԱՅՔԱՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈՍԿ

2015 թվականին բուժման մեջ ընդգրկված 103 բազմադեղակայուն հիվանդներից 44-ը (43%) ունեցել է բուժման բարեհաջող ելք (2014 թվականի 57.6%-ի փոխարեն), 32-ը (31%) բուժումը ընդհատել է (2013 թվականի 19,5%-ի փոխարեն), 16-ի (15,5%) մոտ արձանագրվել է անբարեհաջող ելք, 8-ը (7,7%) մահացել է, 3-ը (2.8%) դեռ գտնվում են բուժման մեջ:

2017 թվականի ընթացքում հետազոտվել է տուբերկուլոզով հիվանդների հետ շփման մեջ գտնվող 2499 տուբերկուլոզով հիվանդի օջախում բնակվող անձ, այդ թվում՝ 422 0-17 տարեկան երեխա, որի արդյունքում 28-ի մոտ ախտորոշվել է տուբերկուլոզ, այդ թվում՝ 5 տուբերկուլոզի դեպքն արձանագրվել է 0-17 տարեկանների շրջանում: Շփման մեջ գտնվող-կոնտակտավոր 0-14 տարեկան 63 երեխա ստացել են Իզոնիազիդով կանխարգելիչ բուժում:

Կարևոր է բարձրացնել առողջության առաջնային պահպանման օղակի դերը տուբերկուլոզի դեմ պայքարում, հատկապես՝ հայտնաբերման գործընթացում: 2017 թվականի ընթացքում առողջության առաջնային պահպանման օղակից տուբերկուլոզ կասկածով տուբերկուլոզի դեմ պայքարի կաբինետներ ուղեգրված 2175 անձանցից 360-ի մոտ ախտորոշվել է տուբերկուլոզ, որը կազմում է ուղեգրվածների 13%-ը, նախորդ տարվա 14.7%-ի փոխարեն:

Ընդհանուր վերլուծությունը ցույց է տալիս, որ իրականացված միջոցառումների արդյունքում վերջին տարիներին նկատվում է տուբերկուլոզի համաճարակաբանական հիմնական ցուցանիշների՝ հիվանդացության և մահացության նվազման միտում, սակայն դեռևս կան մի շարք բարելավման կարիք ունեցող ցուցանիշներ և տվյալներ, մասնավորապես՝ բուժման արդյունավետությունը դեռևս չի հասնում ԱՀԿ-ի կողմից սահմանված բուժման նպատակային 85%-ին, դեռևս շատ են բուժման ընդհատումները թե՛ դեղազգայուն, և թե՛ դեղակայուն տուբերկուլոզի բուժման դեպքերում: Տուբերկուլոզի ցուցանիշների վրա բացասաբար է ազդում նաև հանրապետությունում առկա աշխատանքային միգրացիայի ծավալը: